ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/80

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 12.12.2019թ.)

Հ. Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 12.12.2019թ.)

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 04.12.2019թ. ներկայացված (05.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/80 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն 04.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 27.11.2019 թվականին բողոքարկվել է ՀՀ ՊԵԿ (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար

վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգը:

Մինչ թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքի քննությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից նույն՝ վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով կրկին հայտարարվել է գնանշման հարցում թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով, որտեղ հաղթող է ճանաչվել «ԼԱՅՄ ՏԵԽ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների հետ կապված բողոքներ քննող անձի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նշված իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման ընթացակարգը պետք է հիմնվի մրցակցային, ոչ խտրական սկզբունքների վրա, ապահովելով մասնակիցների մրցակցային իրավահավասարությունը: Ընդ որում՝ օրենսդիրը նախատեսել է և պատվիրատուի, և գնահատող հանձնաժողովի գործողությունների բողոքարկման ընթացակարգ, յուրաքանչյուր անձի համար, ում իրավունքները խախտվել են, ավելին, դրա բողոքարկման հնարավորություն նախատեսելով նաև դատական կարգով: Այսինքն պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի գործողությունների բողոքարկումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, կասեցնում է գնման գործընթացը ապահովելով այն մասնակցի իրավունքները, որի ենթադրյալ խախտման հետ գործ ունենք: Բողոքարկված գործողության արդյունքում ստանալով դրա բավարարում, մասնակցի և պատվիրատուի համար առաջացնում է հետևանքներ՝ ի թինս այլնի, գնման առարկայի վերաբերյալ պայմանագրի կնքում, ուստի դրանից հետո պատվիրատուի համար դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը, քանզի այն արդեն իսկ գնվել է: Այն դեպքերում, երբ գնման գործընթացի բողոքարկման դեպքում դրա բավարարումը կարող է հանգեցնել գնման առարկայի վերաբերյալ պայմանագիր կնքելու հետևանքների, ապա այդ ժամանակահատվածում հայտարարված նոր գնման ընթացակարգը կստեղծի խոչընդոտներ բողոքարկված գործընթացի բավարարման համար, իսկ բողոքարկված գործընթացի քննությամբ պայմանավորված, մինչ դրա վերաբերյալ որոշման կայացումը, նույնիսկ հետագայում դատական կարգով բողոքարկված լինելու դեպքում, ըստ էության բացառում է պատվիրատուի համար գնման պահանջի գոյություն ունենալու հանգամանքը, քանզի ինչպես վերը նշեցի բողոքի բավարարման պարագայում, արդեն իսկ պատվիրատուն պարտավորված կլինի կնքելու պայմանագիր և նույն ապրանքի կրկնակի ձեռքբերման պահանջը կբացակայի նրա մոտ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում

պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ուստի վերը նշված վերլուծությունը կատարվել է նաև ելնելով այն ընդունող մարմնի նպատակից, այսինքն ոչ խտրական մոտեցման ապահովմամբ, մրցակցային սկզբունքների հիման վրա, դրա վերջնական արդյունքին հասնելու տրամաբանությունից: Եվ եթե գործողությունները չպետք է հանգեցնեն Օրենսդրի կողմից նախատեսված վերջնական արդյունքի, ապա այն չի ծառայի իր նպատակին:

Սույն դեպքում ՀՀ ՊԵԿ կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ առկա բողոքի քննությունը և միգուցե նաև դրա դատական կարգով բողոքարկումը բավարարման դեպքում, որպես հետևանք կնախատեսի բողոքաբերի և պատվիրատուի միջև պայմանագրի կնքման և եթե մինչ այդ առկա կատարված լինի գնումը, ապա դա կատարելը կլինի անհնար, այսինքն մասնակիցը չի կարողանա հասնել ակնկալվող արդյունքի: Եվ եթե առաջնորդվենք ոչ խտրական մոտեցման սկզբունքներով և փաստենք այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/068» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ առկա բողոքի քննության բավարարումն իրենից ենթադրում է գոյություն ունեցող գնման պահանջի դադարում, ուստի նույն գնման առարկայի վերաբերյալ հայտարարված գնման ընթացակարգի չի ծառայի իր նպատակին և այս դեպքում նույնգնման առարկայի վերաբերյալ հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգը աննպատակահարմար է և ոչ իրավաչափ:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել չկայացած հայտարարելու «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգը:

Ի լրումն բողոքի ներկայացված գրությամբ «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգը բողոքարկվել է 04.12.2019 թվականին, որի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 05.12.2019 թվականին:

Ըստ Պատվիրատուի դիրքորոշման՝ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգում «ԼԱՅՄ ՏԵԽ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից: Պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվել է 04.12.2019 թվականին և նույն օրը կնքվել է պայմանագիրը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում պետք է փաստել, որ գնման գործընթացը անկախ այն հանգամանքից, թե որ փուլում է գտնվում ինքնաբերաբար կասեցվում է բողոքի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելուց հետո, չնախատեսելով ոչ մի բացառություններ: Ուստի բողոքի առկայության դեպքում ցանկացած գործընթաց որ իրավաչափ է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքի վերաբերյալ հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 05.12.2019 թվականին, ուստի թվարկված գործողությունները նույն օրը կատարված լինելու հիմքով ենթակա է պարզաբանման դրա կատարման ժամը, պարզաբանելու համար այն հանգամանքը, թե 04.12.2019 թվականին ժամը քանիսի դրությամբ է կնքվել պայմանագիրը:

Նշված հանգամանքն էական նշանակություն ունի այնքանով, թե արդյոք պայմանագիրը կնքվել է գնման ընթացակարգը կասեցված լինելուց հետո, թե ոչ:

Նշվածի վերաբերյալ ներկայացվել է նաև հարցում ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

Ընկերությունը խնդրել է ի լրումն 04.12.2019 թվականի «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքի՝ պարտավորեցնել չկայացած հայտարարելու «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնման ընթացակարգը և պարտավորեցնել ընդունելու պայմանագիրը միակողմանի լուծելու որոշում:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով և ի լրումն բողոքի գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.12.2019թ. թիվ 1/18-2/76713-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Լայմ Տեխ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Մասնակից), որն արձանագրված է գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) թիվ 2 արձանագրությամբ:

Մասնակցի հայտի, ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություններ չեն արձանագրվել և «Լայմ Տեխ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որն արձանագրված է Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ չի կիրառվել և «Լայմ Տեխ» ՍՊԸ-ի հետ սույն թվականի դեկտեմբերի 4-ին կնքվել է N ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074 ծածկագրով պայմանագիր:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.12.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի միակ մասնակից «Լայմ Տեխ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և 04.12.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Լայմ Տեխ» ՍՊԸ-ի միջև 04.12.2019թ. կնքվել է N «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով պայմանագիր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 04.12.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.12.2019թ. թիվ 1/18-2/76713-2019 գրությունը, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված **անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձան՝ պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը պարունակում է պայմանագրի կնքման ամսաթիվը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար վերահսկման և ղեկավարման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի միակ մասնակից «Լայմ Տեխ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

04.12.2019թ. ժամը 12:15-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն:

Նույն հայտարարության համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, անգործության ժամկետ չի կիրառվել:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում բողոքը ներկայացվել է **04.12.2019թ.** ժամը 17:23-ին:

05.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը, որի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ ծանուցվել է, ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվել է և Պատվիրատուի կողմից պայմանագիրը ստորագրվել է **04.12.2019թ.**:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն **նախքան պայմանագրի կնքումը** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, **բացառությամբ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման:**

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ բողոքարկվող «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/074» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիրը կնքվել է 04.12.2019թ., Ընկերության կողմից բողոքը նույնպես ներկայացվել է 04.12.2019թ., մինչդեռ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի

<u>նախքան պայմանագրի կնքումը</u> բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Իսկ տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ընկերության կողմից բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ բողոքարկվող ընթացակարգի շրջանակներում պայմանագիրն արդեն իսկ կնքված է եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից 04.12.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**